

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 30

24 ՅՈՒՆԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրօնային Գրականութիւն (Խմբագրական) Տ. Ա. — Ժողով Սան (Իր հարիւրամեակին առթիւ) ՍԻԵԼԼԱ. — Եկո՛ւր (Սիրերգ) ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ: — Ինչպէ՞ս կամուսնանան (Նորավայել փիլիսոփայական) ՊԱՐԷՏ: — Սիւլանա (Անտառային պատկեր մը) ՍԵՆՔԻԷՎԻՉ: Բարգմ.: ՍԱ.

Ժողով Սան (Իր հարիւրամեակին առթիւ) ՍԻԵԼԼԱ. — Եկո՛ւր (Սիրերգ) ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ: — Ինչպէ՞ս կամուսնանան (Նորավայել փիլիսոփայական) ՊԱՐԷՏ: — Սիւլանա (Անտառային պատկեր մը) ՍԵՆՔԻԷՎԻՉ: Բարգմ.: ՍԱ.

Ժողով Սան (Իր հարիւրամեակին առթիւ) ՍԻԵԼԼԱ. — Եկո՛ւր (Սիրերգ) ՇԱԽԱՍՊ ԾԻԱԾԱՆ: — Ինչպէ՞ս կամուսնանան (Նորավայել փիլիսոփայական) ՊԱՐԷՏ: — Սիւլանա (Անտառային պատկեր մը) ՍԵՆՔԻԷՎԻՉ: Բարգմ.: ՍԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրեցն է Կ. Պոլսոյ համար Բաւսուլ զրօ. եւ գաւառներուն համար յիսուս զրօ., կանխիկ վճարելի: Արժանահամար 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները ճիշտողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Ձեռք-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ԶԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزنه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻԴԵՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կապիտալի թանկութեան ֆոնդոյին ներքեւ, երաշխաւորեալ դրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոյ ձգած է իր բոլոր լաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ դադափաւր մը տալու համար թուեց մէկ քանին այն համարածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Փօլի-Տրամպիք եւ այլն թատրոնները, նաեւ Գօտտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուլոնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Գոյ Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, ՕՐԷԼ տը Վիլի եւ Սամարիթէի մեծ վաճառանոցները, Սոմմայի Փոխադրութեանց, Թրանսպորտի թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն, որպէս ընկերութեան Պոլսոյ կողմի գործադիրութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբ ծանօթացնելու իր օգուտը:

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որոն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար. Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes՝ ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործադիրութիւնը:

Հասցէ — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէոյիք Նըլաւը խան, Թիւ 14, Լա Գօնֆրանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր աճանական սեփականութիւնը եղող անքիֆալ վաճառատուն մը, Եսկկայ Սահափլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎՈՂԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՖՈՐՄԱ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասը	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասը	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստը	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵՆԻ ԶԻ ԳՏԵՆԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր ապկացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադասեց ջան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեան ջնջումն է այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ ԵՒ ՎԼԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Իսայէթ Խան: Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ

2 — 10



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Ինսպանատան

Բեքա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 16

Զրահեան աքաբման

Պալպալեան տմէն օր ահուայի ամէն տե.

ուկ հիւանդութիւններով տառապողներ,

կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-

շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է

ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-

րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ահուա-

նեքը: Ցորեկները ահուայ քաշել տալու հա-

մար բոլոր վարձք մը չկայ. քաշել տուողին

կամէն կախեալ է: Վկայեալ առաջնորդու-

ժուկի Տիկին Բօլին եւս կը գտնուիմիշտ նայն

գարմանտան մէջ: Ազգացներուն ձեռք 2 — 10

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱՐՈՅԺ — ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Վ Կ Ա Յ Ե Ա Լ

ԼԻՍԵՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԵՆ

ԵՒ

ՊԱՇԵՆԻ ԺԸՆԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԵՆ

Կը բուժէ ահուայի տմէն տեսակ ցաւեր

եւ լինանքու հիւանդութիւններ, կատարելա-

գործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի

ամէն օր, Բեքա, Մեծ Փողոց ԲՐԷՏԻ ԼԻՕ.

Նէի զիմացը Կլավանի փողոց Թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ

ցորեկ աղքատաց ահուայ քաշելը ձեռք է:

2 — 10

A black and white woodcut-style illustration of a man carrying a large fish on his back. The man is wearing a hat, a light-colored shirt, and trousers. He is walking towards the right. The fish is very large, with its head and tail visible. In the background, there is a small house with a chimney. The illustration is signed 'W. H. H.' in the bottom right corner.

Անհայ մանկանց համար արտօժելի կերակուր (և ղեղ մըն է, և երակներ զայն խմած առէն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ)։ Այսոր շուտմը կր տեսնէ թե ինչպէս կ'արային բոլոր վիշտերը անմիջապէս կր դադարին որպէս թէ նոր արիւնն է նոր կեանքը բոլոր անկարգութիւնները չնչկով մանկան արտօժել առողջութեան և զուարթութեան փորձադիցին։ Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) ըմպելիքին և արտօժակով կրնաւ։ Սրակս զաւակն և պզտիկ ծերմակ ահալայնիւր առանձնացաւ և վիշտերու քրակին երեւն էլիկ։ Բազմիշ Բաղդարութիւնը երախայնց առողջարար գիւղութիւն և զաւուրով կուտայ, մարտոգութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւնը կր պատճառէ։

ԸՍԴ.ՕԹ.Ի ԲԵՂԵԹ.ԲՈՒԹ.ԻՈՒՆ

բոլոր աղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդապոյն երևոյթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերները կը փխէ։ Ըսգօթի Բաղդարութեան վրան այս նշանով վարդապոյն փախեցի մէջ ծաղումս չիւրեան կը ծանցուի։

Երկրու վրայ ասոր ուշա-
գրու թիուն բնէլ պէտք է:

20

ቡድኑ የተገኘው የጥንታዊው ስራ የጥንታዊው ስራ ነው።

ԱՊԱՐԻԿ ՎԱՃԱՐՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ՎԵՐԶԻՆ ԳԻՆ

Դնեցեք Կ. ԵԱՎԲՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱ-
ԴՈՒԼԵԱՆԻ՝ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճափայէն ԵՒ Սէլանէն ուղղակի բերել տուած
բարմ, հոսաւեհ ԵՒ առողջաբար թէրերէն,
որոնք տմբան եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառականիչին :

Կ. Պոլիս, Պահճէ Գալիու,
Յէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ .
նոյնպէս Եգիպտոս : 3 — 10



Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նայ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ գա-
ւազաններ եւայլն, գիտե-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց թիւ 13,

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական մշարուց կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Դործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գործողներէն՝ 100ին 15 զեղչով:

3—10

ՄԱՍԻՆ

54^ր

ՏԱՐԻ, Ե. ՇՐՁԱՆ



ՔԻՒ 30



24 ՅՈՒՆԻՍ 1904

ԿՐՕՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քարոզադիրքէ կամ Աղօթագիրքէ բոլորովին տարբեր՝ Մուշեղ վարդապետի Դրուագները ինքնատիպ էջ մըն է կրօնային գրականութեան, որուն վրայ կը սաւառնի կարծես Աստուածաշունչի ոգին, առանց բնատկարանալու՝ ժամանակակից բանաստեղծութեան ոճով գրուած ըլլալուն համար։ Եւ արդէն հակառակ ասոր, հակառակ երիտասարդ. եկեղեցականի մը հեղինակութիւնն ըլլալուն, Հին և Նոր Ուխտի մեծ պատահարներուն այդ նկարագրութիւնը պատկանելի հնութիւն մը կը բուրէ, ընթերցողը փոխադրելով այն դարերուն ու այն միջավայրերուն մէջ որոնց վրայ կը խօսի։

Պատկերներու հեղինակը, իր այս նոր գործին մէջ, նիւթին յարմար դարձուածք մը տուած է իր ճիւղն գրչին, որ ո՛չ ալ խարհիկ լեզուի պարզութիւնն ունի հոն ո՛չ ալ հինին խրթնութիւնը։ Տեսակ մը ներդաշնակ խառնուրդ է Դրուագներուն ոճը, պատմուած անցքերուն խորհրդաւորութեանը, բարձրութեանը հասնող, ծայրէ ծայր կրօնային ու ծայրէ ծայր գրական։

Անկեղծապէս պէտք է ըսել թէ քիչ անգամ այս տեսակ երկասիրութիւն մը ողջունելու առիթը կունենանք։ Աղօթագիրք ու Քարոզագիրք սովորական կաղապարումներու պատշաճեցուցում գրուածքներ կ'ըլլան ընդհանրապէս, որոնց մէջ առանձնայատուկ դրապոյր մը չիկայ, — կրօնային գրականութեան ձգողական գործութիւնը կազմող այն տարրը առանց որու կամխք մը կը դառնան էն լաւ շարագրուած էջերն անգամ։

Մուշեղ վարդապետ սապէս կը սահմանէ

իր գործը. — «Դրուագներ երկու նպատակ ունի. Ա. — Ընթերցողներուն տալ զուտ Աստուածաշունչական ոգիով ու նիւթով գրուած գիրք մը։ Բ. — Իր ընթերցողները տանիլ՝ իր պարունակած նիւթերով ու բնագրական ցուցումներով (indication), բուն իսկ Ս. Գրոց ընթերցումին, որ մեր ժողովուրդին համար ամէնէն անտեսուածը եղած է»։ Թէ Դեր. Հեղինակը ո՛ր աստիճան յաջողած է հասնիլ իր առաջադրած նպատակին, ամբողջական ընթերցում մը հանդարտ ու մտամոխիռ՝ ցոյց պիտի կրնայ տալ միայն այդ բանը. և կրնանք աւելցնել, թէ յուսալից բութիւն չպիտի պատճառէ։

Գործը բաժնուած է երկու մասերու, միակ հատորի մը մէջ, առաջինը՝ Հին Ուխտի, և երկրորդը՝ Նոր Ուխտի պատահարներուն, ԺԲ և ԺԱ գլուխներով։ Արագ ակնարկով մը, մամուլի տակէն դեռ նոր դուրս եկող այդ թարմ էջերուն վրայ, անհնար էր այդ քսաներեք գլուխները ներկայացնել համառօտիւ, նոյն իսկ եթէ Դրախօսական մը եղած ըլլար այս յօդուածը որ կը ձգտի միայն շեշտել Դրուագներուն բոլորովին նոր ու գեղեցիկ գործ մը եղած ըլլալը, կրօնային ճիւղին մէջ, և մանաւանդ Աստուածաշունչի ընթերցման գրգռու տուող գործ մը ինչ որ անոր արժանիքը կ'աւելցնէ։ Եւ արդարեւ, իւրաքանչիւր գլուխը մանրանկար մըն է Ս. Գրոց այս կամ այն հոյակապ էջին, այնպէս հարադատ ու յաջող՝ ինչպէս ընդարձակ անտառ մը, տարածուն դաշտադեպին մը կամ անեղր ծով մը փոքրիկ լուսանկարի մը մէջ կ'ամփոփուին, կը խտանան, պահելով իրենց

գոյներուն յստակութիւնը ու տեսարանին վեհութիւնը: Դեռ ազնեւուն մէջ, լուսանդկար գործիքին ու վրձինին տեղ անցած է գրիչը աւելի՛ կենդանի, աւելի՛ արտայայտիչ քան առաջինները:

Մուշեղ վարդապետի սիրուած ու հաւնուած գրիչը պէտք չունէր այլեւս գնահատական տողերու, եթէ մշակելու ձգտած չլլար, իր այս երկասիրութեանը մէջ, նոր ճիւղ մը, կրօնային գրականութեան ճիւղը, ամէն կարգի ընթերցողներու զայն հաճելի դարձնելու կերպով, որուն համար շնորհաւորութեան արժանի է: Եթէ կրօնային գրուածքները շատ շնն փնտռուիր ու կարդացուիր մեր մէջ, պատճառն այն է թէ քիչ եկեղեցականներ ունինք որոնք անոնց մասնաւոր դրոշմ մը, ձգողականութիւն մը տալու գաղտնիքն ունենան: Վէպին հետաքրքրականութիւնը, քերթուածին նրբութիւնը, կրօնային աւանդութեանց ձգբրտութիւնն ու օծումը, ամէն բան պէտք է ձուլուած, միաւորուած ըլլայ անոր մէջ: Առաջին տողը պէտք է մինչեւ վերջին տողը կարդացնել տայ, ներշնչումի ու խոկմունքի դադարներով, և ընդհանուր կերպով խորունկ տպաւորութեան մը տակ:

Եւ հիմայ որ, վէպն ալ, բանաստեղծութիւնն ալ, կրօնային տեսութիւններն ալ հապճեպ կերպով արտադրելու մղուած գրիչներու տակ՝ անխնամ ու այլասերուած բաներ կը դառնան մեծագոյն մասամբ, երբ արդէն իսկ մշակուած, ընդունելութիւն գտած գրական ճիւղեր՝ հարեւանցիօրէն մշակուելով կը կորսնցնեն իրենց հրապոյրը տակաւ տակաւ, աղուոր երեւոյթ մըն է որ կը գտնուի եկեղեցական մը որ լրջօրէն կը ձեռնարկէ նոր սեռի մը մշակութեան, — կրօնային գրականութեան սեռը, — խղճամիտ ուսումնասիրութեանց ու նօթագրութեանց արդիւնքին միացնելով փայլուն ոճ մը ու բանաստեղծական պատմուածք մը, Յորդանանու փունքէն ու Զիթենեաց լերան բարձունքէն:

Տ. Ա.

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՒՆ ԶՕՆԱՆՄԱՌՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի օրը, տօն երկոտասան Մարգարէից, Ամեն. Տ. Մաղաքիս Ս. Պատրիարք Հօր անուան տօնախմբութիւնը ըլլալով, Ն. Սրբազնութիւնը՝ առաւօտուն Մայր Եկեղեցւոյ ժամերգութեանց նախագահելէ ետք, Պատրիարքարանի դահլիճին մէջ ընդունեց շնորհաւորական բազմաթիւ այցելութիւններ որոնք շարունակուեցան մինչեւ իրիկուն: Յաջորդաբար այցելեցին՝ կրօն. եւ Բաղ. Ժողովի անդամներ, եպիսկոպոսներ, քարոզիչ վարդապետներ, Հոգաբարձութեանց, խնամակալութեանց եւ Թաղ. խորհուրդներու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններ: Դատական Բարձր. նախարարին կողմէ եկած էր Սէրվէթ պէյ եւ Ոստիկանութեան Բարձր. նախարարը իր այցելումը զրկած էր յատուկ պաշտօնատարի մը միջոցաւ: Ս. Պատրիարք Հօր այցելեցին նաեւ Հայ—Հռոմէականաց Պատրիարքարանի կողմէ Տ. Ներսէս եպիսկ. Զնոյոյեան, Յունաց Ս. Պատրիարքին կողմէ վարդապետ մը, Պուլկարաց էկզարքարանի Փոխանորդը եւ Բողոքականաց Աղգապետը: Գաւառային առաջնորդներէ եւ զանազան կողմերէ հասան շնորհաւորական հեռագրեր ու գրեր: Մայրաքաղաքիս Թաղային զանազան վարժարաններու աշակերտներ, իրենց տեսուչներուն եւ ուսուցիչներուն առաջնորդութեամբ, Պատրիարքարան գացին եւ ներկայացան Ն. Սրբազնութեան, շնորհաւորական ուղերձներ ներկայացնելով ու երգեր երգելով:

Ս. Պատրիարքը, նոյն գիշերը, Բերա՝ իր բնակարանին մէջ եւս ընդունեց բազմաթիւ ականաւոր անձնաւորութեանց շնորհաւորական այցելութիւնները:

Ա. Զ. Գ. ՊԱՏՐԻԱՐԻՒՆՔԱՆԻ կողմէ ստացանք Նպաստից Յանձնաժողովոյ հրատարակութեանց մասին յայտարարութիւն մը զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով: Այդ յայտարարութեան հ, Յանձնաժողովը հրաւէր կը կարդայ իր Սնտուկին ի նպաստ հրատարակուած դասագիրքերուն գործածութեան:

Ժ Օ Ռ Ժ Ս Ա Ն



Վերջերս Թրանսա փառաւորեց յիշատակը իր ամէնէն կարեւոր զաւակներէն մէկուն, կատարելով Ժօրժ Սանի հարիւրամեակը, որուն առիթով մտաւորական կեանքի արդիւրոյններ կայացուցիչները միահամուռ համաձայնութեամբ, ամէնքն ալ անխախտ բարձրացուցին իրենց ծափի ձայնը՝ անունին մէկու մը, որ ամբողջ սերունդի մը խօսեցաւ, իր հիւթեղ եւ բնութեան ու կեանքի գեղեցկութեանց փառաբանութեամբը զեղուն հոյակապ գործովը:

Թրէտէրիք Լօրիէ, իր կարգին, հետեւեալ ուսումնասիրութեան մէջ, կը վերլուծէ կեանքը ու գործերը Էմիլիանի չքնաղ հեղինակին, քայլ առ քայլ հետեւելով անոր կեանքին կրած բոլոր փոփոխութիւնն ու դիմափոխութիւններուն, և որուն մէջէն, Բօլիքի վիպորը դուրս կուգայ իր ամբողջ յստակ ու կատարեալ պատկերացումովը:

Այսօր, վիպասաններ, հէքեաթերգուներ, բանաստեղծներ տօնոյթի մէջ են: Ժօրժ Սանեանները մանաւանդ, Նօթը Տամ առ Նօհանի ջերմեանդները՝ սրտերնուն մէջ անսահման ուրախութիւն մը ունին: Որովհետեւ կը կատարուի Հարիւրամեակը իտէալի մեծ աշխատաւորուհիին, մօզուհիին աւելի, — ԺԺ. դարու Սիրէնը: Եւ ատրկա տեղի պիտի ունենայ նախաժամութիւն մէջ, յետոյ Վալլէ — Նուառի, կարկաշուն դալարաստանը, իր ապտտարանը, իր առանձնարանը, զորս իր նկարագրականները անմահացուցած են:

Գրական նիւթեր կան՝ որոնց անդրադառնալու երբեք չգեղեւիր մարդ: Ամէն առիթ բարեպառհի կը նկատուի՝ խորասուզուելու անոնց մէջ, անդամ մըն ալ վայելելու համար անոնց հրապոյրը և հաճոյքը: Ժօրժ Սանի կեանքը, սերտօրէն կապուած իր գործին պատմութեանը, միշտ հետաքրքրութիւն պիտի արթնցնէ, այն չանկանութեան համար զոր կը խտացնէ իր մէջ, և որովհետեւ ան չի կրնար բաժնուիլ ո՛չ իր վիպային

զազոնասացութիւններէն, և ո՛չ ալ յուզումներէն այն դարուն ուր ապրեցաւ:

Իր ճակատագրին անհաղորդ պարագայներ, օրօրոցէն սկսեալ, պատճառ եղած են ըսուելու թէ, ամէն բան վէպ եղած է իր մէջ, և իր շուրջը: Օռօռ Տիւփէն, — ապագայ Ժօրժ Սանը, — իր հօրը կողմէ, շատ անուշադակի գիծերով, կը պատկանէր երկու աղանաւորութիւն տուններու: Մօրը կողմէն, ոչ այնչափ փայլուն ծագումներ, զինքը կը կապէին Բարիզի հասարակ ժողովուրդին: Մայրը, Սօֆի Տըլապօրա, աղջիկն էր թոյնավաճառի մը, որ դեղձանիկներ կը ծախէր Սէնի քաւափներէն մէկուն վրայ, գործ մը՝ որ զինքը չհարստացուց, բայց որ իր թողանք փոխանցեց այն հակումը որով ան միշտ հրապուրուող մը եղաւ թոյնուներէ, և որոնց վրայ դրուած ա՛յնչափ գեղեցիկ էջեր՝ մեծ տպաւորութիւն թողուցած են: Ինչպէս Մօնիս Տիւփէն, երիտասարդ ու գեղանի զինուորականը, հրապուրուեցաւ խոնարհ պայմաններու մէջ գտնուող և գեղադէմ մանկամարդ ֆրանսուհիէ մը, որուն հանդիպած էր զիւղի մը մէջ, ինչպէս անոր հետ ամուսնացաւ, հակառակ իր մօրը կողմէ եւեւ ընդդիմութեան. Ժօրժ Սան պատահած է այդ զիւղուածը: Օռօռ երջանիկ ծնունդ մը ունեցաւ, կեանքը ողջունեց երաժշտական եղանակներու մէջ, իր ծնած միջոցին մերձակայ սենեակէն խիստ զուարթ գօնգործաներու եղանակներ կը զարնէին: 1808ին, հաղիւ չորս տարեկան, վտանգներու ետեւէ կը վազէր, հետեւելով ֆրանսական բանակին, դէպ ի Սպանիա, ուր իր հայրը կը պատերազմէր: Նոյն տարին զինքը Նօհան զրկեցին, մօրը հետ, երկուքն ալ պարտասած և ողեսպառ:

Սեպտ. Տին կը մեռնէր իր պզտիկ կոյր եղբայրը՝ Լօրի, և ութը օր հտըք, Մօնիս Տիւփէն, որ ջուրէն կրակէն ազատած էր, կը մեռնէր իրտչուն ձիու մը արկածէ — իր Լիօբաուտօ ձին, զոր իրեն նուէր ըրած էր Թէրտինանտ Է:

Օռօռի դաստիարակութիւնը բոլորովին միօրինակ տեղի չունեցաւ: Ճիշդ, ընդհա-

կառակը: Ասպարէզի բուռն հակոտնէութիւն մը և մոլեգին նախանձաւորութիւններ՝ կը բաժնէին իր մայրը՝ մեծ մօրմէն, որոնց միջև պէտք էր բաժնուիլ իր դաստիարակութեան խնամքը: Մեծ մայրը՝ որ կոմսուհի Հօրն կը կոչուէր, ազնուապետական ճաշակներ և զաղափարներ ունէր: Մինչդեռ մայրը, բընաղդաբար արուեստագիտուհի, միամիտ և օժտուած անսահման իմացականութեամբ մը, զուարթամտութեամբ (humeur) անհաւասարելի, իր անկախութեանը մէջ ինքզինքը աւելի բարձր ու ազնիւ կըզգար քան բոլոր անուանական ազնուականները: Մէկը՝ կը սիրէր առանձնացեալ և դաղտնապահ կեանքը: միւսը կը չփանար պոռոտ հաճոյքներու և բազմամբոխ փողոցներու նախասիրութիւնը ունենալու համար:

«Ես Բարիդուհի եմ, — կ'ըսէր, — և ինչ որ կը խրտչեցնէ Բարիդի միւս ժողովուրդը, ինծի հաճելի է և պէտք է: Բարիդը ինծի կուտայ միշտ տօնոյթի մէջ ըլլալու սպաւորութիւնը»:

Ասոնք պառակտումներ էին, որոնք վերսկսելու համար միայն կը դադրէին, և այս կրկնակ լուծին հակադարձութիւնը, ուրիշ բան չէր ընէր, բայց եթէ խռովել տղուն անստոյգ հոգին, հանդէպ երկու հակառակորդ կամքերու, որոնք հաւասարապէս սիրելի էին իրեն: Ինչպէս կարելոր խնդիրներու մէջ, նոյնպէս ամէնաոչինչ բաներու մէջ ասոնք չէին կրնար իբրու խօսք հասկցնել: Մեծ մօրը համար՝ լաւագոյն ճաշակն էր զայն հագուեցնելին նորաձեւութեան համաձայն, և ոտք կը կոխէր անոր չի՛նջ տալու տեսակ մը հին հագուստ: Մինչ մայրը, կը կարճեցնէր զանոնք, ձեռքովը ձեւափոխելով, և ասկէ զատ հաճոյք կըզգար չինական ձեւով յարդարելով անոր մազերը: Դալով տունէ դուրս խնդիրներու, կարծիքներու անհամաձայնութիւնը կատարեալ էր:

Այս հակադարձութեանց մէջ, իր ծաղկատի բնաւորութիւնը կը կազմուէր, կը զարգանար ինքն իրենը: Վիպային նախապատրաստութիւն մը կը յայտնուէր իր մէջ, կարգալ գիտնալէ առաջ: Դեռ չա՛տ պըզ-

տիկ, կ'երեւակայէր պատմութիւններ, երկար պատմութիւններ, որոնց մասնայատկութիւնն էր երբեք չլիննալ: «Է՛, Օոօռ, — կ'ըսէր իր մօրաքոյրը, — իշխանդ տակաւին անտառէն չելա՛ւ: Իշխանուհիդ շուտով պիտի հաղնի՛ իր զգեստը և պիտի դնէ՛ իր մանկակը»: — «Հանդա՛րտ ձգէ՛ զայն, — կ'ըսէր մայրը, — իր վէպերուն սկսած ատենն է միայն որ կրնամ աշխատիլ»:

Արտասովոր երեւակայութեան ուժ մը ունէր արդէն, կարելի չէր արգիլել զինքը այդ բանէն: Կ'երազէր ու իր երեւակայութեանը մէջ կը կոչէր հարիւրաւոր դիւցազուհիներ, և մտացածին ու առասպելական դիւցազներ, Շէրի իշխան մը, Փանֆարինէ իշխան մը, աստուածացեալ Քօրամպէ մը, որ ո՛չ մէկ որոշ դիմագիծ ունէր, բայց որ, իրեն համար, իր վրայ կը մարմնացնէր ամէն ձիւք, ամէ՛ն յատկութիւն, ամէ՛ն կատարելութիւն: Պատանկութենէն սկսեալ, անդիմադրելի կոչումը սկսաւ մարմին առնել գրաւոր շարադրութիւններու մէջ: Այն ատեն, ուսուցիչ մը կարգեցին իրեն: Բայց ի՛նչ ուսուցիչ:

Տէշաութօր, Տիկին Տիւփէնի ազարակապանը և «պարոն — ամէն — բան»ը, իր թոռանը՝ Օոօռի ուսուցիչը, խիստ եղական մարդ մըն էր, ունենալով անհամար առտառոցութիւններով և ունայնութիւններով չփացուած իրական հմտութիւն մը, — վարժապետ մը, և որ աւելին է, ծիծաղելի երաժիշտ մը, հաստ — գլուխ մը, և, հակառակ ասոր, միեւնոյն ժամանակ սիրտի տէր մարդ մը:

«Այս խածան գամփօր, — գրած է Սան, — հաւատարիմ շուն մըն էր, որ ամէնը կը խածնէր, և որ սակայն կը ձգէր որ տունին տղան քաչէ իր ականջները»:

Ան չօգնեց երբեք կանոնաւորելու իր աշակերտին աղատագրուած ճաշակները: Ընդհակառակը Տէշաութօր անոր կը թոյլատրէր հեծնել կատաղի ձիերու վրայ և զայն կ'առաջնորդէր լորամարդիկ որսորդութեան: Տասնըհինգ տարեկանին, Օոօռ կատարելապէս սորվեցաւ հրացան գործածել, պարել, ձի հեծնել, և սուր գործածել:

«Շրջազգեստ», կը պատմէ, կը նեղէր զիս»: Հետեւաբար, այդ վարժապետը իրեն հազցող էրիկմարդու երկայն վերարկու, արծաթէ կոճակներով զարդարուած տափատ, քասքէդ և հեռկեր: Այսպէսով ան նախաբանը կ'ընէր ազատ ձեւերուն, զորս պիտի նուիրագործէր ետքէն, այդ ժամանակ, առաջին անգամ ըլլալով, հազնելով՝ էրիկմարդու զգեստ, անով ուղածին պէս ըլլալու և լաւագոյն եղանակով թատրոն յաճախելու համար:

Յանկարծ որոշեցին որ Օոռո Բարիգ զրկուի, Անգլուհիներուն վանատունը, իր նկարագիրը կարգապահութեան վարժեցնելու համար: Իր վառ երեւակայութիւնը ամէն կողմ անունդ կը փնտռէր, և կը բռնկէր առաջին կայծէն: Այս նոր մթնոլորտին մէջ, իր հաւատքը վերացաւ: Իրեն պէտք էր իրմէ դուրս բաներ սիրել, եւ որովհետեւ աշխարհի վրայ ուրիշ բան չէր ճանչնար, զոր սիրել և պաշտէր իր անձկայրեաց հոգիին բոլոր թափովը, ան Աստուծոյ յանձնուեցաւ: Տեսաւ երկինքին ճաճանչումը: Միսթիք անձնութեան տազնապ մը եղաւ ասիկա՝ գաղափարական և հրակէշ խանդով նկարագրի մը հետ: Յետոյ, տենդին նոսպան խաղաղեցաւ: Ան յանձնուեցաւ իր զուարթամիտ բնաւորութեան, և ասիկա երկրորդ փուլը եղաւ իր կրօնական պատանեկութեան, զոր ինք կոչեց զուարթ անձնութիւնը, և տունը յանձնուեցաւ սկեպտիկ ազդեցութեանը մեծ մօրը՝ Տիկին Տիւփէն Կը Ֆրանքէօյլի: 1820էն 1823, վերատին ձեռք ձգելով, Նօհանի մէջ, կեանքի ազատութիւնը, թաղուեցաւ ուսումնասիրութեան մէջ: Ընթերցանութեամբ և մենակեաց սեւեռամտածումով, ձեռք բերաւ դաստիարակութիւն մը, ուր ինքզինքնուն եկան իր ինքնականութեան բնազդական զօրութիւնները: Տասնըեօթը տարեկան էր այդ առին: Զինքը ամուսնացուցին պառոն Տիւտըլանի հետ, հասուկ տարիքով, ազնուական ազարակապան մը, խելքը միտքը տուած անասուններու մարդանքին, անձնապէս հսկող իր աշխատութեան ծառաներուն, զբաղող ամէն բա-

նով, բացի իր կնոջմէն, և տեղեկութիւն անգամ չունեցող իր երիտասարդ ընկերուհիին հոգեկան հարստութիւններէն, ո'չ ալ անոր հպարտ ու գորովազուծ բնաւորութեան փափկութիւններէն: Ակամայ և ստորադաս ամուսին, Օռոռ այսպէսով ութը երկար տարիներ քաշքշեց, իր երկու գաւազներուն սիրուն տունին կապուած:

Յայտնի է ասկէ ետքինը: Իր Բարիգ փախուստը, առանց դրամի, իր յարաբերութիւնները ժիւլ Սանտոի հետ, որ իրեն պիտի ձգէր, ա'ցաւոր աշխատակցութեան մը իբր յիշատակ, կէսը իր անունին, փառալից վանկը Սան, որով պիտի ստորագրէր իր գործերը, իր դատը պառոն Տիւտըլանի հետ, որ իրեն պարգեւեց Նօհանի դղեակին ստացուածքներուն վերստացումը, վերջապէս իր արագ բարձրացումը, գրական մեծ համբաւի մը:

ՍԻԷԼԼԵ

ԵԿՈՒՐ

(ՍԻՐԵՐԳ)

Եկո'ւր, տալիսկալից կեանքս խաղաղէ,
Ըզգայ տո'ւր ինձի գորովանքն ու յոյս.
Պիտի գայ օր մ'որ հոգիդ աւաղէ
Արագ խուսափումն երազին այս յոյս.

Եկո'ւր. վաղը դուն գուցէ՝ բարձրա՛ս,
Եւ գուցէ տենդով մը մեռնի հոգիս,
Մի՛ խամրեցընեւ յոյզը պատշումիս:

Թո'ղ որ նայուածքիդ բմպեմ բոցը ջիւնը
Մօտեցի՛ր, բնոյց ծաղիկը կեանքիս.
Համբոյրի մը մէջ մոռնամ ամեն ինչ:

Ա'ն այս կեանքն աղուո'ր ուրախ դանդաղ է:
Եկո'ւր, ձանձրոյթը հալեցուր հոգւոյս.
Լոյս երազի մը մէջը գիս քաղէ,
Բե'ր ինձի սրբիդ գուրգուրանք կոյս:

ՇԱԽԱՍՊ ՄԻՍՏԱՆ

Սկիւտար

ԻՆՉՊԻՍ ԿԱՄՈՒՄՆԱՆԱՆ

(ՆՈՐԱՎԷՊ ԻԶՄԻՐՆԱՆ ԿԵԱՆՔԷ)

Ա.

Օգոստոսի կեսէն վերջը, եթէ տաքը իր ուժգնութեան թափէն բան մը կը կորսնցունէ՝ բարեկամական ձևով կարկառած ըլլալու համար զով աշնան, սկիզբները սակայն, արժանապատուութեանը դպչելիք այդ հարուածը փոխարինել կուզէ այնպիսի չափով մը, զոր մենք հեղձուցիչ կանուանենք:

Ու կը տեսնէք, առտուրնէ մինչև իրիկուն մարդեր որ արեւնոցի մը տակ պատըսպարուած՝ պատերու եզերքէն կը քայեն, գլխարկը ձեռքերնին, ինչպէս նաև անխուսափելի թաշկինակը, որ չեմ գիտեր քանի-երորդ անգամ կը փայտայէ կայլակոտ ճակատները: Բարախը մանաւանդ, ամբողջովին արեւի տակ տաքերուն էն սոսկալին կ'ուսնենայ, սպասելով իրիկուան ուր արեւուն մարը մտնելու ատենը, և այդ կողմէն ծովու վրայէն—փչող հեղիկ հով մը կը զովացունէ, ճիշտ նոյն պահուն հոտ կուտակող բազմութիւնը որ կուզայ ամէն իրիկուն, իր խունկը մատուցանելու՝ իրենց փառքը կաշմող այդ վայրին:

Նստողներու էն շատը Բրամէրէն մինչև Ալհամպրա, կարգով, մէկը միւսէն աղուոր, զուարթ սրճարաններու մէջն է, ինչպէս դարձեալ անոնց առջեւն է, որ ժամը վեցէն (Ը. Ե.) վերջ կը հանդիպի մարդ էն խրտացածին պտտող բազմութեան, որ կը սիրէ այդ կառքի, թրամուէլի, անցորդներու թոնու բոհին մէջ, մէյ մէկ պահ, պուտիկ մը կանգ առնել Լուգայի, Սթորիին կ'ըլլալի կամ Թէադըր տէ Բէի առջեւ, լսելու համար երաժշտախումբերու ածած այն հնչաւորութիւն ոչ մեզի կ'աշխարհները, որոնք շատ անգամ օրէրէթներու կամ օրերաներունը կ'ըլլան՝ անդրէ լիպը և ամպն կամ աբէ սուբէ:

Կը գտնուին դեռ ոչ նուազ երկսեռ մարդիկ, որոնք, ա'լ ուժաթափ արեւ մը քամահրելով, կերթան Պէլ—Վիւէն ալ վար, մինչև, հին Սքալայի ակղը, կուշտ ու կուռ

ծծելու համար իրիկուան հովը որ ամբողջ օրը ի զուր փնտռուելէն վերջ՝ հիմայ ալ սկսած է անհանգիստ ընել ամէն տեսակէ պոռոտ զոյներով արեւնոցներու տակ, կանանց զլխարկները:

Ասոնք քալել սիրող դասակարգը կը կաշմէ, որ դարձին միայն կուզէ նստիլ, շատ անգամ յարմար տեղ մըն ալ չը գտնելը լաւ գիտնալով, աշնչափ շուտ կը լեցուին այդ բազմաթիւ դրօսավայրերը:

Ճիշտ այս կարգին կը պատկանէր մայր մը, իր երկու աղջիկներով: Միջահասակ, լեցուն կին մը 45 50ի մէջտեղ: Բաւական յառաջացած տարիքը, շատ քիչ բան կորսնցունել տուած էր իր գեղեցկութիւնէն, որ կատարեալ պէտք էր եղած ըլլար երիտասարդութիւնը: Քսանթմէկ և տասնըութը տարեկան երկու աղջիկները սակայն, իրենց մօր գեղեցկութիւնէն մաս մը ժառանգած թէև, չունէին անոր ամբողջական շնորհալիութիւնը և անդիմադրելի աղուորութիւնը, այսուհանգերձ սիրուն էին դարձեալ, եթէ ոչ գեղեցիկ և իրենց լաւ հագուելու, միշտ երեւնալու համար առիթ չի փախցնելու կարողութիւնն ու փութիկոտութիւնը, զանոնք տեսնել ուղեւու փափաք մը կըստեղծէր:

Շաքաթը երեք կամ չորս անգամ անպատճառ դուրս կ'ելնէին, Բէի վրայ երկար պտոյտ մ'ընելու, տեսնելու և ցուցադրուելու համար: Եւ իրենց անայլալ սովորութիւնները, նոյնիսկ այդ կարգի պարզ պըտոյտներու մէջ զիրենք յատկանշող սիրուն ամբողջութիւնները կը կազմէին: Այսպէս, զոր օրինակ, մեծ աղջիկը միշտ քիչ մը առջ կամ ետ կը մնար. մինչ պզտիկն ու մայրը, նոյնահասակ. թեւ թեւի մտած կ'ըլլային: Ու լաւ զննող մը, այդ պզտիկ երեւոյթի մէջ իսկ պիտի կրնար երկու աղջիկներուն բնաւորութեանց վրայ գաղափար մը կազմել: Քիչ մը սրտնեղ, նուազ հեռատես և իբր մեծը շարժմանցը մէջ աւելի ազատ ըլլալ սիրողի մը բնոյթը կ'ընդհամարուէր մէկուն մէջ, մինչ միւսը, դէմքը գուցէ քիչ մը չափէն աւելի լուրջ, հաշուած քայլերով և, նայուածքներով, կամայցուկ մը, սանկ

ծածուկէն, բայց լա՛ւ գործը եփողի մը յատկութիւնները կը ցուցադրէր:

Բ.

Օգոստոսի սկիզբները, ինչպէս ըսի, իրիկուն մը այս վիճակին մէջ էր որ իրենց հանդիպած էի քարափը, հին Եփեմի առջև:

Չեմ գիտեր, ինչո՞ւ այնօրը ներսս սփոփաք մը ծնաւ, հետապնդելու այդ իսկափայ ընտանիքը, աւելի լաւ մօտէն հասկնալու վիճակին, իրենց պտոյտին էութեանը թափանցելու:

Հետաքրքրութիւնս գոհացնելու համար կը ներէր ժամանակս. հետեւեցայ ուրեմն իրենց:

Ամէն բանէ առաջ աչքիս զարնող բանը երիպասարդ մը եղաւ, վերջին նորածնութեամբ հագուած, այլանդակ շարժումներով, որ մօր և պղտիկ աղջկան ետեւօքը կուգար: Մեծը ետ կ'աւ առջև մնացած միջոցին, պղտիկ ուշադրութիւն մը իսկ չէր. դարձներ իրեն, ուրեմն երկրորդ աղջկան խնկարկուն պէտք էր ըլլար:

Քանի մը վայրկեան սպասել հարկ եղաւ, առոր ճշմարտութեան համոզում գոյացնելու համար, որովհետեւ պզտիկը նայուածքներուն մէջ իսկ հաշուով էր, բայց անգամ մը նայած միջոցին, ինչպէս այս առաջին տեսած անգամս, մօրը ուսին վրայէն կարծես աչքերուն խորէն՝ մութին մէջ հեռաւոր հրդեհի մը կրակներուն չափ փոքր, բայց շատ փայլուն երկու նշոյլներ էին, որով կը պարուրէր ենթական, ո՞վ գիտէ որքան սաստկօրէն անոր մէջ սէրը կամ ցանկութիւնը արծարծելու փոխանցիկ կարողութեա՛ր մը:

Քիչ մը քայլելէ վերջ, պիտի գայինք տեղ մը, ուր քարափը սիրուն կլորութեամբ մը, աւելի ծովը երկնցած բութ անկիւն մը կը գոյացնէր, անկից վերջ դէպի փունթայ, յարատե կլորութիւնը պահելու համար:

Տղան ակնարկներով և քանի մը շարժումներով բաներ մը հասկցուց և տեսայ որ ճիշտ այդ անկիւնը հասնելէ վերջ, ետ դառնալու վրայ եղող մօր և քոյրերուն դէմ դիմաց եկող սիրահարը, մօրը թեւը պահ մը թողած պղտիկին արեւնոցին մէջ նամակ մը կը սպըր-

դեցնէր: Աչքերու հաղիւ նշմարելի սիրուն ժպիտ մը շնորհակալութեան՝ և ահա յաջողութենէն, քաջալերումէն խելայեղ, տղան երկրորդ քարափ կ'անցնէր շուտաքայլ:

Հա՛րկ է ըսել թէ հետաքրքրութիւնս սրուած էր. կատակերգութեան վերջին սպասելու համար համբերելու բաւական ատաղձ կար: Ես ալ ետ դարձած, քիչ մը հեռուէն, շարունակեցի հետապնդումս:

Դրեթէ քառորդ մըն ալ կամաց կամաց քայլեր էին. մթննալու սկսեր էր, բայց դեռ թափանցիկ մթութիւն մը, ուր իրերը կարելի էր բաւական որոշել: Այդ ժամանակամիջոցին մէջ փոքրը հանդարտ էր, մեծ աղջիկը միայն սովորականին պէս էր. միշտ նոյնը, քանի որ ամէն տասը քայլին կը հանդիպէր տարբեր տարբեր երիտասարդներու—ապահովաբար տունին բարեկամները ամէն ալ, քանի որ նախ մայրը կը բարեւէին—որոնց հետ քանի մը խօսքեր կը փոխանակէր, իր ամէնէն սիրուն ժպիտները կը շուայէր, ոմանց հետ քահ—քահով մը կը խնդար և ուրիշներու նուազկոտ մարմրուն նայուածքներ կը նետէր, բայց ամենուն հետ ալ վարուելու կերպին մէջ դնելով մասնաւորութիւն մը որ շատ բան ալ կը նշանակէր: Ամէն բարեկամներու հանդէպ լուրջ՝ աւելի ճիշտ կախադէմք մը պահող պղտիկին նամակի խնդրէն շատ աւելի խօսուն նշանակութիւն մը:

Այդ ստէպ դադարները հաղիւ մեզ Պէլլավիթթայի անկիւնը հասցուցեր էին, երբ անկէ՝ ելնելով առջեւնիս կը ցցուէր քիչ մ'առաջուան շահատակը: Կ'երեւայ թէ կրասպասուէր, հող, այդ հանդիպման, որովհետեւ պղտիկ աղջիկը, որ ազատ մնացած թեւովը հովանոցը սիրուն կերպով մը կուրծքին սեղմած կը մնար, հիմայ ձեռքը չփակին կողմը տանելով, թուղթի կտոր մը կը ցուցնէր: Տեսնելու էր մեր Տօն Բիշօթին ուրախութիւնը, որով ճամբան կը շարունակէր. բայց ապահովաբար իմ զարմանքս ալ Սանքօյինէն նուազ չէր, քանի որ լաւ գիտէի թէ նամակը դեռ հավանոցին մէջն էր, զայն չէր առած, ինչ էր ուրեմն այդ չփակին տակ ծածկուած թուղթը: Դեռ բաւական քայլե-

ցինք. հիմայ բազմութիւնը չատ աւելի էր, տեսնելով Բարեկամս, իր նախկինէն կրակ մը մուծը կոխած՝ բայց սրճարաններու կազմի ուղեով համար ուղարկուողը կանչած միջոցին կտուցները կարծես ցերեկի կը վերածէին պահ մը ես ալ կրցի չորս կողմն դիտել ու Բէն: Շատ դժուարութիւն կը քաշէի ես հետապնդմանս մէջ, որովհետեւ անոնք իրենց պէտք եղած յարգանքը կը վայելէին իրր կին, և անոնց առջև բացուած ճամբան, չուտով մը կը գոցուէր ինծի համար: Այլ գրեթէ յուսահատիւ սկսած էի. զանոնք հետապնդելէն աւելի, Բրամէրին հասնի կուզէի հիմայ, պարտաւոր մարմնուց քիչ մը հանգիստ տալու համար: Բարինայի քարափին վրայ երկարած սեղաններու մէջէն, նստած հանդարտիկ մը ճնկող բազմութեան քսուելով, դատած էի վերջապէս ճամբայ մը, երբ մերիները այդ սեղաններու ծայրէն նստողները դիտելով անցնելու վրայ էին:

Ճիշդ այդ մէջտեղի աթոռներէն երիտասարդ մը ելաւ և սկսաւ իմ հետեւելիք ճամբէս երթալ: Այլ տեղ բանալու հոգէն աղատած՝ աւելի ուշադրութեամբ սկսայ նորէն դիտել: Բրամէրի սեղաններն ալ ճեղքեր առցեր էինք, և Բասաթին մօտեցած, հոր մօրը ձախ թեւը մտած պզտիկ աղջիկը կամացուկ մը չիփակին թուղթը կերկնցնէր առջեւէս դացող երիտասարդին մատներուն, գրեթէ առանց երեսն իսկ նայելու:

Այլ նպատակիս հասած էի: Նստայ հոն և սիրուն Քէն կարծես դժուարաւ դատուիլ ուղող բազմութեան մէկիկ մէկիկ դէպի իրենց դռները ցրուիլը դիտեցի գրեթէ մէկ ժամ, երբ կըսկսէր կերակուրէ վերջ պտոյտի ելլողներու ուրիշ բազմութեան մը սկզբնաւորութիւնը:

Չեմ գիտեր չորս կամ հինգ տարի վերջ, բայց դարձեալ օգոստոսին՝ երկու բարեկամ նստած էինք նոր շինուած Քիւպին պարտէզին մէջ: Դուրսի եռուղեւին, խոր, ակամջ պատուող՝ նուազածութեան մեղմացած օրօրներու մէջ, երկար առեն բաժնուած բարեկամ սրտերու անհաղորդ մնացած զգացումներուն թափ էինք տուած:

Իրարու այնչափ բաներ ունէինք խոստովանելու, որ մեր շուրջը ալ բան մը չէինք

տեսնելու համար ուղարկուողը կանչած միջոցին կտուցները կարծես ցերեկի կը վերածէին պահ մը ես ալ կրցի չորս կողմն դիտել ու նոյն առեն չի կրցի զօրմանքի բացազանս չութիւն մը զսպել, որ չը վրիպեցաւ ընկերօջառութեան թնկն:

Բովի սեղանին ընտանիք մը մօտեցած էր: Ես ալ զոր օր մը հետապնդած էի, միայն երիտասարդ մը աւելի կար խումբին մէջ և ուրիշ ուշադրաւ փոփոխութիւն մըն ալ պզտիկ աղջիկը կախ դէմքով մօրը թեւին չէր որ յենած էր, այլ ալ ինչ տղուն որ կը յիշէի թէ, Բրամէրի Բասաթին առջև չիփակին նախկին ընդունողն էր:

Ամէն ալ կ'ուզէին հոտ, սեղանին առջև նստիլ, միայն մեծ աղջիկն էր որ կ'ընդդիմանար և ի վերջոյ խօսքը մասամբ իրեն մնաց: Պզտիկն ու երիտասարդը նստան և ալ յոգնած երեւոյթ մ'ունեցող մայրը, քաշկըրտուելով հետեւեցաւ մեծին, որ իր սովորական պտոյտի սէրը թէ պէտքը, դեռ չէր կրցած յագեցնել:

Բարեկամս մօտէն կը ճանչար այդ ընտանիքը և իմ բացազանս չութեանս բացատրութիւնը լսելէ վերջ, ըսաւ թէ հիմայ քովերնիս նստողները երկու նշանածներ էին:

Եւ արդէն տարբեր կերպով չէր կրնար ըլլալ, քանի որ ուրիշ պարագայի մը տակ պատշաճութեան դէմ պիտի ըլլար անոնց հոն, քով քովի միս մինակ նստիլը: Տեսնելու արժանի էր այն ուրախութիւնը որ կը լիալիւար աղջկան դէմքին վրայ, որ հիմայ հեռու էր հին կախերեսը ըլլալէ, թէ և լըջութեան հով մը միշտ պահած ունէր դեռ:

Աչքերը՝ այդ խորէն՝ կրակէ նշոյլներ ցայտեցնող աչքերը՝ հպարտ գոհունակութիւն մըն ալ կը ցոլայնէին հիմայ: Ինքնավստահ իր ուժերուն վրայ և հաշիւներուն արդիւնքը կանխաւ չափելի գիտցող մէկուն մը սէս, ունեցած գոհունակութիւնը կարծես ըսել կուզէր:

— Տեսա՞ք ինչպէս յաջողեցայ, դուք ամէնքդ ըսէք տակաւին, թէ ամէն երկտասարդի ժպիտներ չապելելով վերջապէս մէկը կարթերնիդ կրնաք անցունել, և կամ պէտք

է որ աղջիկ մը երբեք ծածուկ կամ յայտնի
 ու ե իցէ յարաբերութիւն չունենայ երիտա-
 սարդի մը հետ, իր անունը ու վարկը չը նսե-
 մացնելու, կուսական անբժուկները լաւ չը
 հասկցուած իր ամբողջ աւելորդ բծախնդ-
 րութիւններովը պահելու համար: Այս չոր-
 րորդ կամ հիւ գերորդն է, որով քով քովի,
 կտուց կտուցի, այսպէս օր մը ամէնուն առ-
 ջէ հասել կարենալու իրականութիւնը կու-
 ղէի վայելել: Եթէ մէկուն հետ յարաբերու-
 թիւն ունեցած միջոցիս, ուրիշ մըն ալ չը
 հետապնդէի, կրնայի այսպիսի փոքր տարի-
 քիս մէջ, մեր ամէնուն իտէալը կազմող
 չնորհքով ամուսին մը ունենալու բաղձանքս
 իրագործել: Այո՛, պէտք է մէկ քանին մէկ
 տեղ հետապնդել: Յուսախարութիւնները
 ինչո՞ւ դառն ընելու աշխատել, միայն մէ-
 կուն կառչելով, անոր համար պէտք եղածէն
 աւելին զոհելով, երբ քիչ մը հաշիւով,
 վարուելու կերպի մէջ պզտիկ, օհ շատ պզդ-
 սիկ, բայց ենթակային համար խիստ կար-
 եւոր տարբերութիւն մը կրնայ քեզ նպատա-
 կիդ առաջնորդել, ինչո՞ւ ստորնանալ սա-
 էրիկ մարդուն առջև որուն աղջկան մը մասին
 ամենէ շատ կարեւորութիւն տուածը՝ անոր
 իրեն կարեւորութիւն չըտալն է: Եւ մտա-
 ծել թէ կան անանկներ, որոնք կը սիրեն
 այդ ողորմելիները: Սիրել, սէ՛ր... օհ,
 սէրը... ինչ կատակերգութիւն...:

Ու այդ լսարանկէն հրդեհուող, հրդեհող
 աչքերուն մէջ գոհունակութեան, ուրախու-
 թեան և ուրիշներու, մանաւանդ հիմայ
 պտոյտէ վերադարձող և ամէն մէկ պտոյտին
 մէջ, յոյսերուն ա՛լ քայքայուն շէնքէն բան
 մը վար առնող քրոջը համար, արգահատան-
 քի խառն զգացումներ կուգային գամուելու
 նայուածքի մը մէջ, որով կը պարուրուէր
 երիտասարդը: Ակնարկ մը ուր շատ դիւրին
 էր կարգալ իրենց միտ յիշենք գոհ՝ ապագայ
 ամուլի մը կեանքը ամբողջ:

ՊԱՐԵՏ

ՍՏԱՅԱՆՔ Դ. Պաղտատեան Գրատու-
 նէն՝ Կոջ անկումը անօրութեան պատճառով
 վէպի մը առաջին մասը, հեղինակութիւն
 Յ. Ս. Արիկեանի, երեք անջատ մասերու
 բաժնուած որոնք պիտի հրատարակուին յա-
 ջորդաբար: Իւրաքանչիւր հատորի գինն է
 3 զր: Այս գործը, տեղական կեանքէ առ-
 նուած վէպ մըն է, նախապէս հրատարակ-
 ուած իբր թերթօն, և բաւական ընդունե-
 լութիւն գտած:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՉԱԿ

25^ր օգոստոս

Վարժարանը, իր 25ամեակին առիթով,
 վերակազմուած նոր և լաւագոյն կարգադ-
 րութիւններով, կը բացուի Դ. օր. Սեպտ.
 7ին (Ն.Տ.): Առեւտրական ուսումներ մեծ
 տեղ մը կը բռնեն բարեփոխեալ Ծրագիրին
 մէջ: Վարժարանին ուսմանց ընթացքը վե-
 ցամեայ է, 2 տարի նախապատրաստական,
 և 4 տարի ալ Վարժարանական կարգերու
 համար: Ուսուցչական Մարմինը կը բաղկա-
 նայ հմուտ և փորձառու ուսուցիչներէ, ո-
 րոնց 5ը գլխիւններու ընթացաւարտներ են,
 և 1ը համալսարանական մը: Առողջական
 տեսակէտով՝ Վարժարանին դիրքը անդու-
 գական է: Իր յատուկ բժիշկը մօտէն կը
 հսկէ աշակերտներուն առողջական վիճակին
 վրայ: Տնօրէնը և ուրիշ 4 գիշերօթիկ ու-
 սուցիչներ, որոնք վարժարանին շէնքին մէջ
 կը բնակին, մօտէն կը հսկեն աշակերտներուն
 վարք ու բարքին վրայ: Վարժարանին տա-
 րեթոյակն է 16 օսմ. ոսկի, որուն կէսը
 Սեպտ.ի սկիզբը վճարելի է, և միւս կէսը՝
 Յունվ.ի վերջերը:

ԾԱՆՈԹ.—Կ. Պօլսէ եկող հին և նոր
 աշակերտները կրնան կէս գինով Հայտար-
 փաշայի երկաթուղիով Իզմիտ գալ, դիմելով
 մինչև Օգոստ. 18/3, Պայպըլ—Հաուս, Գրի-
 գոր Էֆ. Շահպաղեանի: Վարժարանին նոր
 յայտագիրը ստանալու համար դիմել Մր.
 Ռ.Ռ. Բիթի, Պայպըլ—Հաուս, Կ. Պօլս:

ՍԻԵԼԱՆԲԱ

SIELANKA

թ. 2

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Թարգմ. ՍԱՐՈՐԴԻ

Հեղինակ. ՍԵՆՔԻԷՎԻՉ

Այն ատեն Գասիա և պատանին սկսան երթալ։ Կը ճառագայթէին սիրով, բայց այս անմեղ տղաքը տակաւին չէին համարձակեր իրարու հետ սիրոյ վրայ խօսիլ։ Կըզգային՝ բայց իրենք իսկ չէին կրնար բացատրել իրենց զգացածը։ Սէրը յուզում կը պատճառէր իրենց, քաղցր ու անբացատրելի յուզում մը։ Երբեք, մինչև այդ ատեն, զիրենք չըջապատող և իրենց գլխուն վրայ հովանաւոր անտառը իր բազմազան ձայներով այնքան հըրաշալիօրէն երգած չէր իրենց ականջին, — հեշտալի հովին փայփայունները, մայրիներուն աղմուկը, տերեւներուն մէջ սիւքին հանած խրչրտուքը և սօսափիւնը համայն անտառին կարծես քաղցր բայց անհուն երաժշտութիւնն էր հրեշտակի մը նուագին, որ այդ վայրկեանին կը լսցնէր իրենց սիրտերը տարօրինակ և անգիտակից երանութիւններով։

Ո՛վ սուրբ կարողութիւնը սէրին, լոյսի ինչ խնձողոտ հրեշտակ մըն ես դուն, ինչպիսի վարդագոյն արշալոյս մը խաւարէն ծնած, ինչպիսի երկներանգ ծիածան մը որ կը շողաւ անբաղդութեան լացող ամպերուն մէջէն։

Մայրիներու անտառին մէջ չան մը հաշիւէն յառաջ եկած հնչուն արձագանգը կը կրկնուէր ծառէ ծառ, և ահա՛ շուտով շունն ալ երեցաւ, Պրնէքն էր, որ Գասիայի մեկնելէն վերջ խոյս տալով խրճիթէն անոր հետքին հետեւած էր և հիմա արագ վազքէն յոգնած կը թասար։ Եփուն խանդով մը ուտում մը ըրաւ իր խոշոր թաթերով դէպի ծաղկատի աղջիկն ու պատանին, և ապա իր խելացի, անոյշ և հետախուզիչ աչքերը անոնց վրայ դարձնելով կարծես կը բաղձար ըսել անոնց.

— Դուք սիրահարած էք իրարու, յայտնի՛ է, աղէ՛կ։

Զուարթօրէն երերցուց պոչը, մեծ արագութեամբ առաջ խոյացաւ և սկսաւ հետը հետէ ընդարձակ շրջանակներ գծել վազվզելով, մինչև որ յոգնած կանգ առաւ վերջապէս, անգամ մըն ալ հրճուանքով հաչեց և խորասուզեցաւ անտառին մէջ, երբեմն երբեմն շուջանակի երիտասարդին և աղջկան յառելով աչքերը։

Գասիա ճակտին վրայ դրաւ ձեռքը և ծառերու սաղարթներուն ընդմէջէն շողշողուն արեւին նայելով բացագանչեց.

— Ո՛հ, Աստուծոյ սիրոյն, կէսօրը երկու ժամ է անցեր, և տա՛լաւն տունկ մը անգամ փրցուցած չենք։ Եասիօ, դուն ձախ գնա, ես ալ աջ կ'երթամ, երկուքս ալ տունս կեր հաւաքենք և որովհետեւ ասենք ուշ է հարկ է որ աճապարենք։

Բաժնուեցան իրարմէ և սկսան առաջ երթալ անտառին մէջ համալսի քայլերով, և երբեք չի հեռացան իրարմէ այնչա՛փ որ ալ զիրար չի կրնային տեսնել։ Պտերներուն մէջ—իւր թէ կանաչ ալիքի մը վրայ—ծառերուն մէջտեղ Գասիային գոյնզգոյն շրջադգեստը և դեղին վարչամակը կը տեսնուէին։ Ծնորհալի կոյսը կարծես մանրահատիկ—մացառուներուն, մամուռներուն և պտերներուն մէջէն կը նաւարկէր։ Կարելի էր շատ պատշաճօրէն նմանցնել զայն անտառի բուսալեւայի մը և կամ վիլայի մը առաջ կ'երթար ան, ամէն վայրկեան, իր շնորհալի հասակը ծռելով և ուղղելով, և երբ մայրիներուն ետին անցնելով անհետացաւ պատանին տեսողութենէն, տղան մատները բերնին տարաւ եւ բարձրաձայն.

— Հուփ, հու—հո՛ւփ մը արձակեց։

Գասիա տղուն ձայնը լսելով, կանգ առաւ ժպտուն, եւ չի տեսնել կեղծելով սկսաւ փնտռել զայն. նոյն ատեն տղուն անունը տուաւ մեղմ ձայնով մը.

— Ես սիօ . .

Եւ արձագանքը պատասխանեց .

— Ես ա՛—ա՛—սիօ . . .

Նոյն միջոցին Պրնէք ծառի մը վրայ սկիւռի մը հոտը սուած ըլլալով, կեցաւ անոր բունին տակ, ծնօտը եւ աչքերը դէպ ի վեր ուզղեց եւ սկսաւ հաչել : Սկիւռը որ ճիւղի մը վրայ հանդարտօրէն նստած էր, պոչովը չարաճճիօրէն ծածկեց ինքզինքը, թաթը ցռուկին տարաւ եւ զայն շփելով՝ մատներովը կարծես կը հեգնէր Պրնէքը, եւ ծաղրելով կը ծիծաղէր անոր բարկութեանը վրայ :

Քասիա նկատելով ասիկա, խնդուք մը փրցուց, իր օրինակին հետեւեցաւ պատահի Ես սիօն եւ անտառը լեցուեցաւ աղմուկի, աղաղակներու, արձագանքի, խնդուքի եւ երջանիկ հաճոյքի ձայներով :

Երբեմն լուսթիւն կը տիւրէր քանի մը վայրկեան . միայն անտառին ձայներն էին որ կը խօսէին — թեթեւ սիւքը որ պտերներու տերեւներուն հետ կը խաղար, դարաւոր մայրիները որ կը հեծէին բոպէ մը — և յետոյ նորէն ամեն ձայն կը մարէր լուսթեան մէջ :

Յաջորդ պահին, որոշապէս կը լսուէր չափուած բախումը փայտփորի մը կտուցին . կարծես մէկը ուրիշ անձի մը դուռը կը դարնէր որուն, քիչ վերջը, պատասխան կուտար անտառին խորհրդաւոր ձայնը .

— Ո՞վ կայ հոգ :

Յետոյ ուխուի՛նքն կը սուլէր անուշ ձայնով . յոպոյը վեր կառնէր իր ոսկեգոյն կատարը եւ ասեղի երկայնութեամբ կտուցը բանալով — Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւփ, հո՛ւփ մը կ'արձակէր, կաղնիներու թաւուտին մէջ կը տաւահաւը կը գեղգեղէր . կանանչ երաշտահաւը կը թռչտէր հոս ո՛ր տերեւներուն շուրջ, ժամանակ ժամանակ ալ աղաւ մը մայրիի մը կատարէն թափ կուտար իր սեւ թռիչքներուն եւ տաքէն խոստախելով անտառին մէջ կը պահուէր :

Կէսօրէն վերջն էր, յստակ երկնակամարին վրայ հետքն անգամ չէր տեսնուեր ամէնապզտիկ ամպի մը, եւ սաղարթներու կանանչ գմբէթէն վեր կը տարածուէր կապոյտ

գմբէթը երկինքին անհուն, անսահման, որուն դէպի հորիզոն հակած ծայրերը լրթագոյն էին, իսկ կեդրոնը խոր նապոյտով երանգաւած : Երկնակամարին վրայ մեծ, ոսկեգիսակ արեւը միջոցը կ'ողողէր լոյսով, եւ օդը այնքան ջինջ, այնքան թափանցիկ էր որ, ամենահեռաւոր առարկաներն իսկ կապոյտ հեռաւորութեան վրայ, առանց ո եւ է աղօտ հետքի՝ որոշ, յստակ չըջագիծերով կը տեսնուէին աչքին : Երկնքի բարձունքէն Արարիչը իր բարեացակամ նկատողութեան առարկայ էր ըրած ամբողջ գաւառը : Արմատիքներով ակաղձուն դաշտերը, ոսկի ալիքներով իրեն կը խոնարհէին, եւ վտիտ գլուխները վարսակներուն կը շարժէին զանազակիներու պէս : Արեւով եւ կապոյտով լուսողող օդին մէջ, գարնան սարդին հոս ու հոն կախած թելերը կը ծփծփայլին երփնուած կապոյտ՝ երկնքի կապոյտէն եւ ոսկեգոյն՝ արեւին ճառագայթներէն :

Յաճ հովիտներուն մէջ, ցորենի արտերուն մէջտեղ, մարգագետիններու մութ գոյն գեղմը կանանչ՝ կը փոխուէր : Հոս հոն՝ ուր որ խոտերու մէջ առու մը կը պրզալճակէր, կանանչն աւելի տեսքօտ էր, եւ որովհետեւ գեղնագոյն հրանունկները մարգը ամբողջ իրենցմով կը լեցնէին, ոսկի բողբոջումներու ղողտացնող փայլէն աչքը կը շլանար : Ջրոտ վայրերու մէջ, ուրկից օդին մէջ դուլութիւն եւ խոնաւութիւն առաջ կուգար, լաստենիները մութ երեւոյթ մը առած էին : Անտառը սակայն, մայրիներուն մէջ, օդը հեղձուցիչ էր եւ կարծես տեսակ մը քնատութիւն եւ թուլութիւն ամբողջ գաւառը մեղկութեամբ կ'ընդգրկէին :

Քիչ վերջ սիւքն ալ կարեց իր շունչը եւ ծառաստաններուն, ցորենի արտերուն, ու խոտերուն մէջ շարժումը դադրեցաւ : Ծառերու սաղարթները կախուեցան իբր թէ ննջելու սիւքին օրօրումներէն վերջ . թըռչուններու աղմուկները լռած էին, հանգիստի պահը հպստած էր, հանգիստ մը որ առաջ կուգար մթնոլորտին հեշտալի մեղկութենէն եւ բնութեան քնատութիւնէն : Երկնքի անհուն գմբէթը կարծես կը ժպտէր, իսկ բարձր

չա՛տ բարձր անհասանելի կապոյտին մէջ, Աստուած բարեացակամութեամբ կը հրճուէր տեսնելով այն հրճուանքը, որ կը տիրէր արտերուն, ծառաստաններուն, մարգերուն և ջուրերուն մէջ:

Այս միջոցին կուպր եռացնող պատանին և Քասիա կը թափառէին անտառին մէջ, ընտրանօք տունկեր կը հաւաքէին, կը ծիծաղէին զուարթօրէն: Գիւղացին թռչունի մը նման կ'երգէ ամէն անգամ եթէ կրնայ, որովհետեւ այս է իր ընտելութեան մէկ յատկանիւր: Դեռատի պատանին երգեց պարզ բայց մեղամաղձող երգ մը: Մեղեդիին համեմատ, երգին վերջին բառերուն եղանակը կերկարաձգուէր. տխուր թրթռումներով. տխուր և երկարաձիգ թրթռումներով պատանին և ծաղկատի աղջիկը երգեցին զայն, մինչ իրենց կը ձայնակցէր արծաղանգը: Եւ անտառին մթաստուեր խորութիւններուն մէջ մայրիները մէկ մէկու փոխանցեցին արծաղանգը, երգը բառերու վերածուեցաւ և անտառին հեռաւոր մայրիներու շարքերուն շրջանն. ըրաւ հառաչանքով մը, և հետը հետէ անորոշ, աւելի թեթեւ, աւելի նուաղ շնչոտեր մը առաւ և վերջապէս մարեցաւ լռութեան մէջ:

Ասկէ վերջ Քասիա երգեց աւելի ուրախալի երգ. մը որ «ես ոսկիէ մատանի մը պիտի ըլլամ» բառերովը կըսէին: Ասիկա գեղեցիկ երգ մըն է: Ծաղկատի և կամահաճ կոյս մը կը հակառակի իր սիրահարին և առաջ կը բերէ այն բոլոր կերպերը որոնց չնորհիւ մոռադրած է խոյս տալ անկէ, բայց չունի այնքան զօրաւոր սլաքներ, պաշտպանելու համար ինքզինքը սիրահար տղուն դէմ:

Երբ կոյսը կը յայտարարէ թէ ոսկիէ մատանի մը պիտի ըլլայ և թաւալի հասարակաց գոյր պողոտային երկայնքն ի վար, մանչը կըսպառնայ գտնել մատանին՝ արագ ակնարկ մը թարթելով. երբ կոյսը կըղձայ ոսկիէ ձուկ մը ըլլալ գետին մէջ, մանչը մետաքսէ ցանցի մը մասին կ'երգէ. երբ աղջիկը վայրի բաղ մը պիտի ըլլամ, կ'ըսէ, լիճին մէջ, ահա՛ կրկին սիրահար տղան իրեն դէմ կը գտնէ որսորդի կերպարանքով. երբ

վերջապէս խեղճ կոյսը ճարահատ՝ չի կրնար ինքզինքը ծածկել աշխարհի վրայ, խանդոտ սիրահարը կ'երգէ. —

Երկնքի կամարին վրայ լոյս մը պիտի ըլլամ,
Եւ պիտի չողամ, քանի որ մարդիկ պէտք ունին լոյսիս,

Բայց չի՛ պիտի ըլլամ սիրահարդ.

Ձի՛ պիտի զիջանիմ քու կամքիդ:

Երիտասարդ սիրահարը անանց յուսարեկ ըլլալու կը պատասխանէ սակայն. —

Ժամուն մէջ շնորհալիօրէն պիտի ծոխմ,
Պատարագ ընել պիտի տամ. լոյսը պիտի դայ

Դո՛ւն իմ սիրականս պիտի ըլլաս,

Դուն պիտի զիջանիս իմ կամքիս:

Աղջիկը նկատելով որ անկարելի է իրեն այլեւս պահուիլ աշխարհիս վրայ, կամ երկնքին մէջ կը համակերպի նախասահմանութեան վճռին և կ'երգէ. —

Կը նկատեմ, կը հասկնամ Աստուծոյ դատաստանը,
Ուր որ ալ պահուիմ, պիտի գտնես դուն զիս,

Դու սիրականդ պիտի ըլլամ,

Պիտի համակերպիմ ես կամքիդ:

— Կը նկատես, Քասիա, ըսաւ կուպր-եռացնող պատանին:

— Ի՞նչ բան, Եասիօ՛:

Մանչը երգեց այն ատեն. —

Դուն իմ սիրականս պիտի ըլլաս,

Պիտի համակերպիս իմ կամքիս...

Քասիա չիկնեցաւ, բայց ծիծաղեցաւ, ուղեց բան մը ըսել և ըսաւ ալ. —

— Տրցակ մը տունկ ժողվեցի, պէտք է ջուրին մէջ դնել, եթէ ոչ՝ պիտի թռումն ամենքն ալ իրիկուն ըլլալէ առաջ:

Արդարեւ տաքութիւնը անտանելի էր Կոյս ալ դադարած բոլորովին: Անտառին մէջ, նոյն իսկ ջուրին տակ տաքութիւնը անհաս-գիստ կ'եփէր, իսկ միջոցը լեցուած էր մայրիներու արձակած ռեսանային բոյրով: Քասիայի ոսկերանգ և գողարիկ դէմքը թրջած

էր քրտինքով, իսկ կոպուտակ աչքերը գունատ կը թուէին: Վարչամակը քակեց դուխէն և սկսաւ հովհարել դէմքը, նոյն ատեն կուպը—եռացնող պատանին տունկերու կողմն առաւ անոր ձեռքէն ըսելով.

—Մտիկ ըրէ, Բասիա, հոսկէ քառորդ մը անդին լաստենիներուն մէջտեղ առու մը կայ, եկուր հոն երթանք և ջուր խմենք:

Երկուքն ալ ս'սան երթալ: Արդարեւ հազիւ քիչ մը տեղ գացած էին, անտառին հողը արդէն իրենց ոտքերուն տակ տեղի կուտար: Ծառերուն մէջտեղ փոխանակ կտցահատիկներու, պտերներու և չոր մամուռի կանանչագեղ ու խոնաւ խուրճը կը տարածուէր: Լաստենի մը երեւցաւ, յետոյ ուրիշ մը և ի վերջոյ ամբողջ շարք մը լաստենիներու: Մտան մութ, խոնաւ թաւուտի մը մէջ ուր արեւին լոյսը խիտ սաղարթներուն մէջէն թափանցելով կ'առնէր անոնց գոյնը և մարդոց դէմքը կը գունաւորէր բաց կանանչով:

Եսաիօ և Բասիօ աւելի առաջ գացին շուքին և խոնաւութեան մէջ: Զգալի դուլթիւն մը, հաճելի անտառին մէջ տիրող տաքէն վերջ, կը շրջապատէր զանոնք: Շուտով լաստենիներու շարքերուն մէջտեղ, սև խարճուտ գետնին վրայ տեսան խորունկ վրտակ մը՝ հոս հոն շրջապատուած պրտունիւրով և եղէգներով, և կամ ծածկուած շրջանակաձև տերեւներուն տակ ջուրի շուշաններուն որ գիւղացիներէն «սպիտակագեղը» կոչուած է:

Սքանչելի վայր մըն էր խաղաղիկ, մեկուսի, սոռերոտ և նոյն իսկ քիչ մըն ալ մութ:

Ձինջ վտակը ծառերուն մէջ կ'ոլորուէր: Շուշանները ջուրին թեթեւ արիւնքներէն օրորուած՝ մեղմիւ կը շարժէին իրենց ճերմակ ծաղիկներով, որոնք մէկ մէկու վրայ հակած կարծես կը համբուրէին զիրար: Ասոնց լայն տերեւներուն վրայ, որոնք վահաններու նման ջուրին մակերեսոյթը կ'երկնային, շափիւղայի գոյնով մարախներ օգին մէջ, անոնց շուրջ, աստիս անդին կ'ոստոտէին իրենց լայն ու խրտացող թեւերով: Այս մա-

րախները այնքան փափուկ և նրբամարմին են որ մարդիկ շատ պատշաճօրէն կոչած են զանոնք «ջուրի կոյսեր»: Սեւ թիթեռնիկներ, սգաւոր ճերմակով եղբուած թեւերով, պըրտուի սէղերուն ծայրերը նստած էին: Կարմրորակ խարճին վրայ անմոռո կները իրենց կապուտակ ծողիկները կը բողբոջէին: Հոս հոն նուրբ եղէգի խուրճերը խշրտուքով մը կը շարժուէին որոնց մէջ հովը իր սովորական երգերը կը սուլէր: Զիննածաղիկի թաղծոտ պուրակներ, որոնց տակ կը ծածկուէին հովտի շուշաններուն և ջրազանգակներուն գլուխները, կը մթնցնէին վտակին ափերը: Սամուխը իր սպիտակափառ բաժակը կը հակէր վճիտ ջուրին վրայ և դլինածաղիկին արծաթ թեւերը կը քլուէին հոսանքէն որ կ'օրօրէր անոնց երկար և նուրբ խոպոպները: Այդ վայրի առանձնավայրը, հեռու մարդոց ժխորէն, խաղաղիկ, միայն թռչուններով, ծաղիկներով և միջատներով կենդանացած՝ հանգիստի խորշ մըն էր:

Այս տեսակ անդորրիկ առանձնավայրերու մէջ ընդհանրապէս յաւերժահարսեր, նայաթներ և անտառներու միւս չար ու բարի աստուածութիւնները միայն կը բնակին: Բասիա ալ որ առջեւէն կ'երթար, երբ առաջին անգամ կանգ առաւ վտակին եղերքը և նայեցաւ յստակ ջուրին—որուն մէջ իր յանկուցիչ և շնորհագեղ պատկերը կարտացոլար—կը նմանէր մէկուն այն անտառներու չքնաղ յաւերժահարսերէն, որոնց կը հանդիպին երբեմն անտառապահներ անտառներուն մէջ, կամ մակուկավարներ՝ երբ իրենց տափանաւերով ծառերու մէջէն հոսանքն ի վար կը սահին: Իր անծածկոյթ գլխուն վարսերը արծակ կը ծածանէին հովէն և կ'իյնային ճակտին վրայ: Շողշողուն էին ծաղկատի աղջկան վարսերը, դէմքը արեւակէզ, չըրթունքները ծիծաղով մը օծուած, աչքերը մշտաժպիտ՝ բայց կապուտակ: Կատարեալ բուսալիւս մըն էր ան, իր բարձր, նուրբ և ճկուն հասակով: Ոչ ոք կրնար երդնուլ թէ ակնարկէ մը խրտչած՝ ան չի պիտի նետուէր ջուրին մէջ, անհետանար մշուին, ծիածանի մը կամ արեւի ճառագայթներու մէջ, և

կամ չպիտի փոխուէր յանկարծ շուշանի մը, կամ ձիւնածաղկի մը որ զինքը փրցնել ուզողներուն պիտի պատասխանէր մարդկային բառերով, թէեւ լեզուովը ծառի մը հանած խշրտուքին։ —

— Մի՛ դպչիր ինծի։

Բասիա խուրձին վրայ կանգնած դէպի ջուրը ծռեցաւ մինչեւ որ իր վարսերուն խոպոպները բազուկներուն վրայ ցրցըքնուեցան. յետոյ պատանին դարձաւ եւ հարցուց։

— Բայց ինչպէ՞ս պիտի խմենք մենք։

— Ինչպէս որ թռչունները կը խմեն, պատասխանեց Եասիօ եւ մատնացոյց ըրաւ բաւական թիւով խատուարիկներ եւ ծղիններ որոնք երփներանգ, ինչպէս ծիածանը, քիչ մը հեռուն կեցած ջուր կը խմէին, իրենց կտուցները դէպի երկինք վերցնելով։

Կուպր-եռացնող պատանին որ թռչուններէն աւելի աղէկ միջոց մը գիտէր ջուր խմելու, հարսնախտի խոշոր տերեւ մը փըրցուց, ձագառածեւ ոլորեց եւ լեցնելով ջուրով՝ Բասիային երկնցուց։

Բասիա խմեց, կուպր-եռացնող պատանին ալ խմեց։ Դեռատի աղջիկը քանի մը անմոռակներ փրցուց. իսկ մանչը հանելով դանակը ուռնիի ճիւղ մը կտրեց եւ սկսաւ սուլիչ մը շինել։

Սուլիչը շուտով մը լմնեցաւ. Եասիօ չըրթներուն տարաւ զայն եւ հնչեցուց հասարակ երգ մը այն երգերուն նման՝ զոր հովիւները կը հնչեցնեն իրկունները մարգերուն մէջ։ Հաճելի ձայները անբացատրելի քաղցրութեամբ մը լեցուցին մեկուսի վայրը։ Պահ մը վերջ պատանին վար առաւ շրթներէն սուլիչը եւ մտիկ ըրաւ լսելու համար լաստենիներուն մէջ հնչող արծազանգները, այնպէս կը թուէր թէ՛ իրեն հետ՝ ջինջ առուն, ստուերոտ լաստենիները, եւ եղէգներուն մէջ պահուած թռչուններն ալ ալանջ կուտային երգին մարող ձայներուն։ Ամէն բան լռեց, բայց չատ չանցած, իբր պատասխան տրուած գրգիռի մը, թեթեւ սուլում մը լըսուեցաւ, յետոյ երկրորդ մը, յետոյ երրորդ մը։

Լուծիւնը աւելի ծանրացաւ։

Սոխակն էր, սոխակը որ պատասխանելէ վերջ մրցումի հրաւերին, սկսած էր երգել։

(Գ. եւ վերջին մասը յաջորդով)

ԴՈՒՐԵԱՆ ՍՐՔԱԶԱՆ ԱՌԱՋԱՌԴ ԽՁՄԻՐ



Բերկրութեամբ եւ անկեղծ հաճոյքով կ'արձանագրենք Դուրեան Սրբազանի ընտրութիւնը՝ իբրեւ առաջնորդ Իզմիրի։ Գաւառային Ժողովը իր չորեքշաբթի իրիկուան նիստին մէջ, որ գումարուած է՝ ատենապետութեամբ Ղուկաս Էֆ. Եսայեանի, միահամուռ քուէով վիճակին առաջնորդ ընտրեց Դպրեվանքին պատկառելի ու համակրելի վերատեսուչը։

Հոգեւոյս Մելքիսեդէկ Սրբազանին արժանաւոր յաջորդ մը գտնելու համար՝ Իզմիրի ազգայինները բաւական մտածեցին, խորհրդակցեցան, եւ առանց աճապարելու՝ յանգեցան համաձայնութեան մը որ պատիւ կը բերէ իրենց։ Ոչ նուազ պատուարեր է Գեր. Եղիշէ եպիսկոպոսին համար՝ Գաւառ. Ժողովին միաձայնութիւնը, որ կանխաւ կ'ապահովէ իրեն՝ իր գտնելիք ջերմագին ընդունելութիւնը եւ Առաջնորդարանի Ժողովներուն կողմէ իրեն ընծայուելիք աջակցութիւնը իր այս հովուական պաշտօնին մէջ։ Դիտելի է որ Դուրեան Սրբազանին անունը ամէնէն վերջը յիշուեցաւ իբրեւ առաջնորդական ընտրելի ու ամէնէն առաջ անցաւ, ծանօթ ըլլալով ո'չ միայն իր եկեղեցականի արժանիքը, իր խոր հմտութիւնը ու գրաւիչ պերճախօսութիւնը, այլ նաեւ իր վարչական կարողութիւնը որով այսքան տարիէ ի վեր կը վարէ Դպրեվանքին նման կրօնային կրթական մեծ հաստատութիւն մը, ուսուցչական ծանրադրադ աշխատութիւններէն զատ։

Դուրեան Սրբազանի ընտրութեան լուրը առաջին անգամ հրատարակեց Արեւել, հինգշ. թիւով, իր Իզմիրեան թղթակցին հեռագրով, եւ նոյն օրէն ի վեր ամէն կողմէ հրապարակային ու անհատական շնորհաւորութիւններ կ'ուղղուին Ն. Գերապատուութեան որ օգափոխութեան համար վերին վոսիոր կը գտնուի այս պահուս։

Մասիսի խմբագրութիւնն ալ, — որ 1900էն

ի վեր բաղդը ունեցած է վայելելու Դուրեան Սրբազանի պատուաբեր աշխատակցութիւնը, երբ հաղուողէս կերպով ժամանակ եւ տրամադրութիւն ունեցած է գրելու, ինչպէս այս տարեշրջանի սկիզբը զոյգ մը կրօնային չքնաղ քերթուածներով օժտեց այս շաբաթաթերթը, — իր խնդակցութիւններն ու շնորհաւորութիւնները կ'ուղղէ Ն. Գերապատուեթեան՝ Իզմիրի առաջնորդութեան կաթեւոր պաշտօնին կոչուելուն առթիւ:

ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆԱՑ

Կ. — ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսի Հայ Հռոմէականագ առաջնորդ Տ. Պօղոս եպիսկ. Սապպաղեան, որ անցեալ կիրակի գումարուած կրօնականներու և աշխարհականներու խառն ժողովին կողմէ պատրաստուած հնգամուն ցանկին գլուխը կը գտնուէր, 59 քուէարկուներու 50ին քուէն ստացած ըլլալով, — այսինքն բացարձակ առաւելութիւն, — այս հինգշաբթի իրիկուն Բերայի Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ գումարուած եպիսկոպոսներու Սինոդական ժողովին կողմէ ընտրուեցաւ Կաթողիկոս — Պատրիարք: Գուէարկուներու թիւն էր 16, որոնցմէ 11ին քուէն, — այսինքն օրինական երկու երրորդի մեծամասնութիւնը ստացաւ Սապպաղեան Գերապայծառ:

Սինոդականները ժամ 7ին մտած էին տաճար, որուն դուռները փակուեցան իսկոյն, և ժամ 12ին միայն բացուեցան, մինչ եկեղեցւոյ զանգակները կը հնչէին և հետաքրքիրներու բաղմութիւն մը, եկեղեցական ու աշխարհական, անձկութեամբ կ'ըսպասէր ընտրութեան արդիւնքը խմանալու:

Տ. Պօղոս Սրբազան՝ զգեստաւորուած և կաթողիկոսական գաւազան ի ձեռին՝ կեցած էր խորանին առջև, չրջապատուած Սինոդականներէն, ամէնքն ալ շուրջառ առած:

Նորընտիր Կ. — Պատրիարքը՝ շարականներու երգեցողութեամբ և հանդիսաւոր թափօրով առաջնորդուեցաւ Պատրիարքա-

րանի դահլիճը ուր ընդունեց նմրկայից շնորհաւորութիւնները: Թէ՛ եկեղեցւոյ բակին մէջ և թէ՛ Պատրիարքարանի դահլիճին մէջ բարեմաղթութիւններ եղան Վեհ. Կայսեր արեւատութեանը համար, որոնց ձայնակցեցան ներկաները «ամէն»ներով:

Հանգուցեալ Էմմանուէլեան Ս. Պատրիարքին յաջորդը պատկառելի եկեղեցական մըն է, 68 տարեկան: Ծնած է 1856ին Հալէպի մէջ ուր իր նախակրթութիւնը ստանալով, պատանի հասակէն ղրկուած է Զմմառի վանքը ուր 8 տարի դաստիարակուելէ ետքը՝ վարդապետ ձեռնադրուած է: Մէկ քանի տարի վանքին մէջ պաշտօնավարելէ ետքը, հոգեւոր պաշտօններով այցելած է Ուրֆա, Մալաթիա, Երուսաղէմ, Պէրութ: Իր պաշտօնավարութեան մեծագոյն ժամանակամիջոցը անցուցած է Եգիպտոս, 1873էն մինչև 1904, երբեմն իբրեւ փոխանորդ եւ յետոյ իբրեւ առաջնորդ:

Նորընտիր Կ. — Պատրիարքը ծանրախոհ ու հեզահամբոյր եկեղեցական մըն է, ինչպէս կը վկային զինքը մօտէն ճանչցողները: Անձնական բաւական հարստութիւն ունի և վերջին տարիներս 1000 ոսկի նուիրած է Զմմառի վանքին, որուն միաբան է, գործարանի մը շինութեան համար: Նիւթապէս նպաստած է նաեւ Գահիրէի ու Աղեքսանդրիոյ Հայ — Հռոմէական եկեղեցիներուն:

ՌՕՊԵՐԹ ԳՕԼԵՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կըսկսի Սեպտ. 2/15ին: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ անադելու համար: Վարժարանին մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնամարդներուն և խողերուն, ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարդի նոր և զեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երկու տարիէ ի վեր բացուած է նաեւ փոքր տղոց յատուկ նոր շէնք մը, ուր կ'ընդունուին մինչև տասը տարեկան աշակերտներ:

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ԳՈՐԾԵՐ

Ս. Հայրապետը վերջին օրերս Սանահնի վանքը գացեր է, ուսկից Թիֆլիզ պիտի երթայ օգոստոսին:

— Էջմիածնայ վանքին բոլոր կալուածները, նաև մօտակայ անտառը, կառավարութեան կողմէ անուրդով վարձու տրուեր են: Անտառին մէջի ճամբան փակուեր է հասարակութեան առջև, ու կը մնայ կապուառուն և անոր աշխատաւորներուն ձեռքը:

— Թիֆլիզի առաջնորդական աթոռը թափուր կը մնար Սուրէնեան Սրբազանի հրաժարեցումէն ի վեր: Սինօզը այս պաշտօնին համար կառավարութեան ներկայացուցեր է Սանահնի վանահայր Գարեգին եպիսկ. Սաթուհեանցը և կը յուսացուի որ հրամանագիրը քիչ օրէն ելնէ:

— Ս. Հայրապետը նկատողութեան առնելով Սալմաստի փոխանորդ Մատթէոս Վրդ. Աճէմեանի մասին հասած բողոքները, հրաժարեցուցեր է զինքը այդ պաշտօնէն եւ հրամայեր է որ իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս դառնայ: Այս վարդապետը, ինչպէս կը յիշուի, իր անպատշաճ արարքներուն պատճառաւ Պատրիարքարանի կողմէ վան զրկուած էր անպաշտօն կերպիւ, ուսկից Պարսկաստան անցնելով՝ յաջողեր է հովուական պաշտօն մը ձեռք ձգել:

— Էջմիածնայ կալուածական խնդրոյն մասին Ս. Հայրապետը նոր դիմում մը ըրած է ի Բեդերսպուրկ, որ չէ մերժուած եւ նկատողութեան առնուելու համար պահուած է:

— Սինօզը որոշեր է քաղաքային դատարանի յանձնել Նիժնի գործակալ Վաղարշակ քննյ. ձօտանանցը եւ Գրգադուր գիւղի իսաւատուր քննյ. Տ. Գրիգորեանը, առաջինը կաշառակերութեան՝ իսկ երկրորդը անչափահասներու պակադրութիւն կատարելուն համար: Նոյնպէս հաստատուեր է Ղարաբաղի հոգեւոր ատեանի այն որոշումը որով Ներսէս և Հմայեակ քահանաները դատապարտուած են մէկ տարուան և վեց ամսուան ասպախարութեան, ասորէն կիներ պահնչուն պատճառով:

Բաղ. Ժողովի ատենապետ Տիգրան էֆ. Եղուսեան երեքարթի օրը Երուսաղեմատուն երթալով, Երէցեան Սրբազանին հետ տեսակցութիւն մը ունեցաւ Երուսաղեմի վանական գործերուն վրայ: Նոյն օրը, Գէորգ էֆ. Ասլանեան ևս փոխադարձ այցելութիւն տուաւ Երուսաղեմի Պատր. Փոխանորդին որ անցեալ կիրակի այցելած էր իրեն Այ—Սթէֆանոս:

Բանկալթիի Վիէննական Միթարեանց վարժարանին ժրջան եւ բաղձարդիւն Տեսուչը, Հ. Գարբիէլ վրդ. Մէնէվիչեան, հրաժարական տուեր է այդ պաշտօնէն, մըտադիր ըլլալով Վիէննայի վանքն առանձնանալ՝ զրական ու մատենադրական աշխատութիւններով պարագելու համար: Հ. Մէնէվիչեան, մասնաւորապէս, պիտի հսկէ հայերէն մեծ բառարանի մը տպագրութեան զոր պատրաստած է երկարատեւ աշխատութեամբ:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, Եւ. առաժօտ: Գիշերօթիկներու տարեթոյակն է 12 օամ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. մէջ, և կէսը Յունուարի մէջ: Ծառաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օամ. ոսկի և երկու դասի համար 5 օամ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1 ու կէս ոսկի աւելի կը վճարեն: Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն ձրի կը զրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հառու, Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. էֆ. Գալվաճեանի, ատենապետ խնամակալութեան, Ատաբաղար:

2—8

Հիմնադիր—Արսօնաք Կ. Ս. Իիթիմիճեան
Պատասխանատու—Տֆօրէն ՏՈՒԹ ԵՎ. ՌԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼՔ Օրագրի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տոքթ. Բ. Էմիրզէ, որ իւր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիզի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չափած է, այժմ հաստատուած է, Բերա Պէոյի ք. Բարմաք Գարու, թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ առանցքէ զոտ նորագոյն մեթոտներով կը բուժէ ջղային ու նոզեկան ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցուժէ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անդամալուծութիւն եւ կարկամութիւն եւ այլն: Ասկէ զատ, սկզբի եւ սովորական (սոյլը) (սըրոնա), առանց գործողութեան՝ նոր դրութեամբ մը կը դարձնէ, տեղը առանց յայտնի ընելու: Տոքթ Էմիրզէ Է. Կը գտնուի, Բերա Պէոյի ք. Բարմաք Գարու, թիւ 16 տան մէջ, ուր կիրակիէն զատ ամէն օր կէսօրէն յետոյ ժամը 1էն մինչեւ 4 (Ը.Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրքեթ օրերն ալ ձրիաբար կը դարձնէ հիւանդները:

3-10

ՏՈՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պօլսոյ կայս. բժշկական վարժարանին, անդամ Բարիզի Բժշկական համաժողովին:—Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարաններու հիւանդութեանց:—Պատեոյ վկայագիր բունի Պէրլինի, Լանտոնի, Բեյթալի եւ ուրիշ երկիրներու Ակադեմիաներէն:—Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղիակ իր մասնագիտութեան վերաբերեալ գործերու: Հիւանդ կ'ընդունի՝ Պօլսոյ կողմը կամուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն: Իսկ Բերա, Թաքսիմ, Ֆրանսա. կան հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6-էն 9 (Ը. Ե.):

3-10

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Պատկերազարդ 1000 է աւելի հզօր բաղկացած

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Նախնեաց բռնութիւններէն նորաբանութիւններ, —գաւառական բռնութիւններ, հանրագիտական հաստատութիւններ, երկրագործութեան, գիտութեանց, դիցարանութեան, առողջաբանութեան, օրինագիտութեան, ճարտարութեան: Գործնական կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճօն եւ դիւրատար բառագրքի մը պէտքը ընդհանուր եղած էր ցարդ. Ահա այդ պէտքը լրացնելու կոչուած է սա՛ն գործն, օգտակարով հայ եւ օտար բաղմաթիւ բառագրքերէ: Ոչնչամբով հետազոտուած են բռնութիւն ճշգրիտ նշանակութիւններն, անոնց որոշ եւ ամփոփ սահմաններն, իրենց հակամիջներով ու համանիւններով, հին ու նոր պէտպէս առումներով, Զանց չէ առնուած նաեւ դնել բաներու ծագումն, կենդանեաց, բուսաց ու

3-10

դասակարգութեան վերաբերիլ. ի հարկին անոնց թուրքերէն ու ֆրանսերէնն եւս:

Բացի բուն բառագրքէն՝ գործոյ տարող ընթացքին մէջ հանրագիտական հաստատութիւններ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրագործութեան, գիտութեանց, դիցարանութեան, առողջաբանութեան, օրինագիտութեան, ճարտարութեան, գործնական կենաց վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն: Թուրք աղնիւ եւ տպագրութիւն ընտիր եւ խնամեալ. դարդարուած լատկապէս փորագրուած օրերուն եւ ճաշակաւոր պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրաւրն քաջակերութեան արժանի օտոյ գերադաս ցապէս օգտակար գործոյն համար, 20 դասական, Պօլսոյ, 25՝ գաւառաց, թղթատարի ծախուց համար եւ 6 ֆրանք օտար երկիրներու համար:

Հեղինակին հասցէն՝

Կ. Պօլսոյ, Հաճօրուլօ խան, թիւ 24



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուժեղով արտօժուած

Կեդրոնաւոր Քեդրոնաւոր, իրեն յատուկ շէնքը

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ. ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՊԻՍԻՔՈՎ ԵՒ ՇՈՊԵՆԱԻՈՎ ՈՒՂԵԻՈ. ԲՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ.

րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 Փրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրի եւ տուր 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, 2 10

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ բուսակի հիւղեր

VICTORI ՎԻԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութիւններ ունի թէ
DE Բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
րուն վճարումները չաթաթկան մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1902ից 3րդ 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ից » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
քայական հրովարտակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քիւ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա

Եւ Բրէտի Լիոնէ

Լիազոր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ԲԵՋԵՃԵԱՆ

Պոլիս Բաքրեքոյու խան

Բիւ 45 եւ 45 Ե.

2-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքուրեան եւ նորոգութեան
(Գրասենեակ՝ Մանուկ — փայլ, Թարգմա-
լար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)

Այս հանրամատչի գործարանին մէջ կը
մաքուին աղաւթած եւ փայլատ թէ՛ մետաք-
սէ եւ թէ՛ բարդէ մէկն տեսակ ընտիր գոր-
գեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց
որ եւ է արտա կամ հեաք ձգելու: Ընդ-
հակառակը, բոլորովին նոր երեւթ մը
կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած
գորգերը:

Ունի նաեւ առուելութիւն մը նոր գոր-
գերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին
մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցե-
ցերու (կիւղէ) կեր ըլլալէ:

Կը նորագոյն նաեւ արեւէ կերպով մնա-
ռած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ
պարտասակ նոր գորգեր, ինչ մեծութեամբ
ու ճաշակով որ ուզուի:

Յանձնարարութիւնք պէտք է ուղղուին
գրասենեակը:

Դիւրամաշելի պայմաններ: 2—10

ՏՈՔԹ. ԲԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou Banderjali

Ձիդերու, լեարդի եւ ստամոքսի հիւանդու-
թեանց մասնագէտ

Բարիդի հիւանդանոցներուն մէջ գործնա-
կան փորձեր կատարելով վերագրեալ հիւան-
դութեանց համար մասնագիտութիւն ձեռք
բերած է: Իրեն դիմողները կը դարձանէ ամէն
օր ժամ 7էն 10 հերթ Աղա Համա հիւանդ-
կան հիւպատոսարանին դէմ, թիւ 5 տունը,
իսկ առտունները մինչեւ կէսօր Պօլիս կամաւր-
ջին գլուխը Բոսթաքի Արսէնաքի թիւ 71
դեղատունը: Ինչ տանի մէջ կը դարձանէ
լղային տկարութիւններ, լսւնստութիւն,
անդամալուծութիւն, գլխու ցաւ, օրտի բա-
րակաւ, անքունութիւն, ափրդիտեան
ախտ, յօդացաւ, օտամաքսի հիւանդութիւն-
ներ, դժուարամարտութիւն, արգանդի հի-
ւանդութիւն եւ այլն: Դարմանման համար
ներարկուածով ելեկտրականութիւն կը գոր-
ծածէ: Ելեկտրական դարմանի համար մաս-
նաւոր սրահ մը կայ:

2—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն տեսակ քօհաֆիյի ապրանց

Մեծ-Շուկայ, Բերքհիներու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր
հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սուլ-
թան—Համա, Միւրիլի Դրամատան դէմ
թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիյի
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-
տուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տակունութիւն, եւ դիւրամա-
շելի գիներու առուելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան:

Աղա՛մ Վարդեան մեծապէս զոհ
թողուցած է իր բազմութիւ յաճախողները:
Կ'արժէ որ Շուկայ ելլող մէկն ընտանիք
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հօգալու համար:

2—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ. ՄԵԾ ԳՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'Մ

Գե. Նե. Շբ. օրերը առաւօտեան կանու-

խէն մինչեւ իրիկուն Ժ. 11½

Բե. Գե. Ուր. օրերը ճէն մինչեւ 11½

Երաւի օրերը ժամադրութեամբ 2—10

